ՀԱՇՎԵՏՎՈՒԹՅՈՒՆ
ԳՈՐԾՈՒՂՄԱՆ ԸՆԹԱՑՔՈՒՄ ԿԱՏԱՐԱԾ ԱՇԽԱՏԱՆՔՆԵՐԻ ՎԵՐԱԲԵՐՅԱԼ

1. Քաղաքացիական ծառայողի անունը, ազգանունը՝ Լիլիթ Սարգսյան

2. Զբաղեցրած պաշտոնը՝ Գործառնական վարչության առանձին գործառույթներ համակարգող խորհրդական

3. Գործուղման վայրը և ժամկետները՝ Չեխիայի Հանրապետություն (ՉՀ), ք. Պրահա 2023 թվականի նոյեմբերի 28-30

4. Հրավիրող կողմը՝ ՉՀ ֆինանսների նախարարություն

5. Գործուղման նպատակը՝

Մասնակցել «Կառավարության ֆինանսների կառավարման տեղեկատվական համակարգի (ԿՖԿՏՀ) ներդրման օպտիմալ լուծումների մեթոդներ» թեմայով ճանաչողական այցին, որը շրջանակներում ներկայացվել են ՉՀ պետական համակարգի թվայնացման ուղին, ճարտարապետությունը, ՉՀ Թվայնացման և տեղեկատվության գործակալության գործառույթները, հանրային ֆինանսների կառավարման համակարգի գործող էլեկտրոնային ծրագրերը և դրանց միջերեսները (interfaces).

6. Քննարկված թեմաները՝

1. ՉՀ հանրային ծառայությունների թվայնացում. պետական համակարգի թվայնացման ճարտապետությունը. E-government
2. ՉՀ Թվայնացման և տեղեկատվության գործակալության իրավասությունների շրջանակը, կառուցվածքը, առաջնահերթությունները և կառավարումը
3. ՉՀ էլեկտրոնայացման փորձ. էլ-գնումների համակարգ. NEN և E-ZAK էլ. գործիքներ
4. ՉՀ հանրային ֆինանսների կառավարման տեղեկատվական համակարգեր.
5. Թվայնացման համակարգերի ներդրման Custom Built և COTS (Commercial Off the Shelf) լուծումների համեմատական
6. Պետական գանձապետական ինտեգրացված տեղեկատվական համակարգ (IISSP)
7. IISSP կառուցվածք, տեխնիկական նկարագիր, շահագործում, զարգացման հեռանկարներ
8. IISSP առանձին համակարգեր.բյուջետավորում, գանձապետարան, հանրային հատվածի հաշվապահական հաշվառում
9. IISSP առանձին համակարգերի նկարագիր, ինտերֆեյսներ, դրանց կիրառման օրինակներ

7. Հանդիպումները, ելույթները՝

Քննարկումներ են եղել ճանաչողական այցի թեմայի շրջանակներում. շնորհանդեսի տեսքով ներկայացվել են ՉՀ Թվայնացման և տեղեկատվության գործակալության գործառույթները,հանրային ֆինանսների կառավարման ավտոմատացման գործող համակարգերը: Երկկողմ ձևաչափով քննարկվել են 2 երկրների հանրային ֆինանսների կառավարման համակարգերի թվայնացման ճանապարհին հանդիպող խնդիրները, հիմնական ռիսկերը և դրանց հաղթահարման ուղիները:

8. Հանդիպումների ժամանակ ընդունված որոշումները, պայմանավորվածությունները, ստորագրված փաստաթղթերը.

Այդպիսիք առկա չեն:

9. Առաջարկությունները, դրանց ընթացք տալու վերաբերյալ առաջարկները՝ եղանակը, ձևը, ժամկետները, պատասխանատուները, ակնկալվող արդյունքները.

Այդպիսիք առկա չեն:

Գործուղվող՝

Գործառնական վարչության առանձին
գործառույթներ համակարգող խորհրդական
Լիլիթ Սարգսյան

(Մտորագրություն)

04 դեկտեմբեր 2023թ.